

ՇԱՆՏՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ, ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ
ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԶՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

Նախկին և նրա զրկելի
Խմբագրության հասցեն
—
Редакция на востокъ
«Шаржумъ»
Варна
Redaction du journal
«Charjourn»
Varna (Bulgarie)
—
Կոմպոզիցիոն և լուսատեխնիկական
Արտասահմանի ձեռնարկ
(20 ՍԱՆԹԻՄ)
Պուշկարիոյ համար ձեռնարկ
(15 ՍԱՆԹԻՄ)

ՔԱՏԱՆՈՒՄ ԵՒ ԳՐՈՒԹԻՒՆ
Պուշկարիոյ համար
Տարեկան 12 Ֆր.
Վեցամսեայ 6 »
Արտասահմանի համար
Տարեկան 15 »
Վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
Տարեկան 3 սրյ.
Վեցամսեայ 1.50 »
ԿԱՆԻՏԻԿ ՎՃԱՐԵԼԻ
Իրանուցման տողի
արժեքն համար 40 սանթիմ
իսկ վերջին երեսի համար
20 սանթիմ է. երեսին
անցի անգամներու համար
20 ՕՊՊ գեղջ կրնայ
Վառնայի համար ձեռնարկ 10 սանթիմ

ՏԱՐԲԵՐ ԿԱՐԾԻՔ ՄԸ (ԱՌԱՋԱՆՈՐԴԱԿԱՆ ԽՆԴՐԻ ՄԱՍԻՆ)

«Կ. Պուշկարիոյ ժողովը կրօնական ժողովի առաջարկութեամբ պիտի զբաղի Պուշկարիոյ մէջ առաջնորդութիւն մը հաստատելու խնդիրով». ահա այս անակնկալ լուրը վերջերս լրագրիւնները հաղորդեցին մեզի :

Փառք Աստուծոյ, պուշկարահայերու մասին ալ խորհողներ և հոգացողներ գտնուեցան, բայց ի սէր ժողովրդի չը շնորհաբար այն պատիւով որ մեզ կընէ կրօնական ժողովը և քննենք խնդրին դրական ու բացասական կողմերը :

Գրական կողմեր ի զուր պիտի փնտռենք առաջնորդ մը, ունենալու «չառլոթիւնը» արդարացին պարագայները հնարելով :

Եթէ մեր Պատրիարքարանը մարդիկ ունի «ապրեցնելու» թող որ ինչ տեղ մը զրկէ զանոնք, որովհետեւ պուշկարահայերը առաջնորդի մը պէտքը չեն զգար և ոչ ալ կարողութիւն ունին զայն գերցնելու իրենց քրտինքով :

Ու ի՞նչ գեր կրնայ ունենալ առաջնորդ մը պուշկարահայերու համար. Արգեօ՞ք մեր եկեղեցական և գարոցական գործերը պիտի կարգադրէ, որովհետեւ ժողովուրդը իբր թէ «գեռ ընդունակ չէ այդ գործերը կանոնաւորելու», ինչպէս յայտարարեց Պ. Վարդօ : Ինչ անհիմն յոյսեր... Համոզուած ենք թէ «Շարժում»-ի խմբագիրը այդչափ միամիտ չէ և կը հասկնայ որ բարձրաստիճան կրեալան մը միշտ իր դասակարգին շահերը կը պաշտպանէ հակառակ ժողովուրդին և միշտ վերմակը գէպի իր կարգակիցներու կողմը կը քաշէ : (*)

Ըստ մեզ աւելի աղէկ կըլլայ որ քահանան ուղղակի իր ծուխին դէմ առ դէմ գտնուի ու իր արժանիքին համեմատ գնահատուի, քան թէ առաջնորդական փէշ մը

գտնուի քահանային և ծուխին միջեւ, որուն տակ երբեք կրնայ ապաստանիլ ժողովրդին չը սիրած քահանան :

Առաջնորդ մը եկեղեցական գործերու մէջ կամ լիովին պիտի ժողովրդի ցանկութիւններուն համակրայի՝ և այդ պարագային աւոր գոյութիւնը աւելորդ է՝ կամ թէ պիտի հակառակի և նոր նոր երկպառակութիւններու պատճառ դառնայ :

Մեզ շատ ալ չեն հետաքրքրեր բուն եկեղեցական խնդիրները, բայց քանի որ եկեղեցին գոյութիւն ունի, քահանաները աղէկ թող ըմբռնեն որ իրենք պարզ վարձուր ծառայողներ են ժողովուրդին համար, և ոչ թէ կազմակերպուած ոյժ մը՝ յատուկ զեկավար առաջնորդով :

Ազատ Պուշկարիոյ մէջ, ուր մեր ազգայնութիւնը ոչ բունութեան կենթարկուի և ոչ ալ քաղաքակրթական վտանգաւոր մրցումի՝ ի՞նչ օգուտ կրնանք սպասել կղերական կեդրոնացումէ : Ոչինչ ընդհակառակը կրնայ պատահիլ որ պուշկար կառավարութիւնը չափէն սակի կարեւորութիւն տալով առաջնորդի մը կոչումին, զանազան պարագայներու մէջ ոյժ տայ անոր որոշումներուն՝ հակառակ ժողովրդային կամքին, ու այդպէսով առաջնորդի գոյութիւնը մեզի ցաւ ու պատուհաս մը դառնայ :

Քանի որ մաս մը կղերներ արդէն մեր ծոցին մէջ կը տաքցենք, աւելի անվտանգ կըլլայ երբ անոնց գլուխը մեր ձեռքէն բաց չը թողունք...

Աւելի անհիմն է առաջնորդէ մը մեր գարոցներու կանոնաւորումը սպասել : Ո՞վ չի գիտեր որ մեր ազգային վարժարաններու անկանոն ընթացքին միակ պատճառը նիւթական միջոցի պակասութիւնն է : Եթէ դրամ ունեւէնք, աւելի հմուտ և ընդունակ ուսուցիչներ պիտի հրաւիրէինք ու այդպէսով կրթական գործը կանոնաւոր դիրքի մէջ պիտի դրուէր : Մեր գարոցները առաջնորդէ մը ի՞նչ նիւթական

չահ կրնան սպասել, բարոյականի մասին խօսելն իսկ աւելորդ է : Առաջնորդի գոյութիւնը ոչ միայն շահաւէտ չը պիտի ըլլայ գարոցներու համար, այլ և վնասակար :

Մեր գարոցները գլխաւորաբար կը պահպանուին թաղական խորհուրդներու եկամուտներով, իսկ առաջնորդի գոյութիւնը նոյն թաղական խորհուրդներու պիտու ճէններու վրայ պիտի ծանրանայ, եւ ասոր հետեւանքը պիտի ըլլայ անոր թաղական խորհուրդներու ծախքերը պիտի շատնան ու նոյն չափով գարոցներուն յատկացուելիք բաժինը պիտի նուազի :

Ի՞նչ օգուտ ունեցանք այցելու հովիւներէն որ հիմայ ձգտինք մշտական հովիւ մը ունենալ՝ առաջնորդի տիտղոսով :

Վառնան վերջին այցելու հովիւն համար 25 ոսկի ծախսելով ի՞նչ օգուտ քաղած է : Եւ ոչ մէկ : Մեզք չէ՞ին հասարակութեան գրամներուն վատնումը այս միջոցին, երբ մեր գարոցները դաստական ամենաանհրաժեշտ առարկաներէ զուրկ կը մնան :

«Առաջնորդների և այցելու հովիւների մէջ այն տարբերութիւնը կայ, որ առաջնորդին ժողովուրդն է ընտրում, իսկ այցելու հովիւին ուղարկում են բարձրագոյն հոգեւոր իշխանութիւնները», ըստեցաւ :

Ի՞նչ միտթարանք... Միեւնոյն է թէ գառնուկին հարցնես՝ տապակած կուզես ուսուի՞լ, թէ խորովուած : Գառնուկի ուղածն է որ ընաւ զինքը չուտեն :

Պուշկարահայերու փափագն ալ պիտի ըլլայ ոչ միայն անօրուտ, այլ և վնասակար առաջնորդ մը իր վզին չը բեռցուի, նոյնիսկ այցելու հովիւներ զրկելէ ալ գաղտին :

Չը շուարինք, պատրաստ ըլլաւք, երբ Պուշկարի մեր ազգային իշխանութիւնները առաջնորդ մը մեզ ընծայելու պատիւը ընեն, մեր շնորհակալութիւնները յայտնենք այդ մեծ պատուոյն համար ու... մերժենք :

ՄԻՐՉԱ ՍԱՆԹԻՄ

ԴԵՊԻ ԳՈՐԾ (*)

Դէպի գործ, դէպի գործ. այս է կոչը որ պիտի թափանցի այն ամէն սրտերուն մէջ, որոնք կը սիրեն Մակեդոնական գործը, որոնք կը մըռնեն անոր քաղաքակրթական նշանակութիւնը Մակեդոնիայի և Անդրիանապոլսոյ նահանգին համար :

Շատ փորձանքներու հանդիպեցաւ Մակեդոնական կազմակերպութիւնը, տիպաւորութեամբ հալածանքին ենթարկուեցաւ, սակայն ոչինչ կրցաւ կասեցնել անոր գործունէութիւնը : Համաժողովին եկած պատգամաւորները իրենց միասրտութիւնով և անձնուիրութեամբ խորտակեցին ամէն մութ ոտնձգութիւններ :

Հիմա ալ նոր փորձեր տեղի կուենան. լուրեր կը տարածեն թէ կոմիթէն մտադիր չէ ու է գործ մը ընել, կը հրաժարի ազգային փոխառութեան բաժնեթուղթերը տարածել, մասնաճիւղերէն անդամավճարները ընդունիլ և առհասարակ ամէն մէկ նիւթական միջոց ընդունելէ կը հրաժարի :

Ներկայ կոմիթէն միւսներէն աւելի նիւթական միջոցներու պէտքը ունի. և այդ պատճառով ալ իր մէկ շրջաբերականով Մակեդոնական դատին պաշտպանները հրաւիրած է եռանդուն գործունէութեան, բաժնեթուղթերը տարածելու և նիւթական միջոցներ հայթայթելու համար : Առանց նիւթական միջոցի ոչ մէկ գործ կը յաջողի. առանց անոր ամէն մէկ կազմակերպութեան ձեռքերը կապուած են, մանաւանդ մերինին նման կազմակերպութիւններու :

Սակայն կոմիթէն աւելի կարեւոր և անհրաժեշտ կը համարէ նաեւ քաղաքական կապը, անդամներու բարոյական ուժը, զոր պէտք է ստեղծել եռանդուն գործունէութեամբ :

(*) Այս յօդուածը թարգմանուած է Մակեդոնական կոմիթէի օրկան Արէֆօրմիտէն, որ քանի մը շաբաթ դադարելէ վերջ, նոր կոմիթէի ղեկավարութեամբ վերակուեցաւ :

(*) Միւս անգամ մենք կը պատասխանենք Պ. Միրզային : Մ. Խ.

Ահա թէ ինչու կ'օմիթէս կը դիմէ
Մակեդոնիայի դատարանը պաշտպան-
ներուն և համակրողներուն՝ զա-
նոնք գործի հրաւիրելով :

Ամէնք ալ մտէք կազմակեր-
պութեան շարքերուն մէջ՝ գոր-
ծելու, կռիւի համար ուժեղ մի-
ութիւն մը ստեղծեցէք :

Մասնաւոր խօսակցութիւննե-
րու մէջ, դասախօսութիւններով,
երկկողմեանով հասարակութեան
պարզեցէք մեր գործին կենսա-
կանութիւնը, հասարակութեան
բոլոր տարրերը ձուլելով ուժ մը
ստեղծեցէք, որ կարենայ ամէն
հարուածի, ամէն պատահարի
գիմանալ, զոչ պագգան կը պատ-
րաստէ մեր ընդհանուր գործին :
Ինչպի գործ, գէպի գործ :

ՄՍԱԾՈՒՄՆԵՐ

Հայ ազգը չէ ունեցած չըջան մը,
ուր ընկերակցութիւնները այնքան
բազմութիւն եղած ըլլան եւ թերթե-
րու, հանդէսներու սուկային ա-
ռատութիւնը այնքան չուարեցու-
ցած ըլլայ ժողովուրդին ընթերցող
մասը որքան հիմա :

Երբ Արմէնին, Արմէնիան, Հան-
դէս Ամսօրիայն եւ Բազմավէպը մի-
այն կային, ընկերակցութիւններն
ալ համեմատաբար քիչ էին, աղտոտ
պայքարը (՝) սահմանափակուած էր,
զերբար կործանելու տենչը գրեթէ
գոյութիւն չուներ, ու եւ արժա-
նիքի տէր մարդու մը անունը անի-
րաւ կերպով ցեխի մէջ մտցնելու
ձգտումը չկար, սուտերը, զրպար-
տութիւնները մահացու մեղքեր կը
համարուէին եւ արտասահման ապրող
ամէն հայ իր գործով կը զբաղէր,
օրական ապրուստը հոգալու ետեւէ
էր (՝) մինչդեռ հիմա հասնողը՝ թերթ

(՝) Որովհետեւ պայքարելու համար
խնդիր չը կար մէջտեղը, եւ ոչ ոք
կուզէր վերջի մէջ մտնել խոթել :

(՝) Եւ արտասահմանի հայուն մի-
միայն իրմով զբաղուելը շատ պախա-
րակելի էր :

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՐԴԻ ԵՒ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻՑ

(ԲԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՒՂՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Իմ շատ սիրելի «Կարիճ»
ինք եւ ան ինքու լուսաւոր
խաղախան յայտնաբերուած զուսախ-
տութիւն, որովհետեւ ոչ ոք
այնքան չի սպիտակ իմ փառ-
խաղախան զգուցողութեան վրա,
որքան զուս :

III

(Շար. նախ. քիտիկ եւ վերջ)

Քաղաքական տրամադրութիւններ
այս ըմբռնումը առաջնորդում է մեզ
դէպի հետեւեալ եզրակացութիւնը,
այն է, որ պէտք է վերջապէս ձեռք
քաշել հայ բուրժուական դասից,

մը ձեռքը կամ աշխատակիցներու
վրձակով մը՝ ազգասեր եւ ժողովուր-
դին օգտին անձնուէր մարդամեք-
նաներ կտրած, աղտոտութիւն չմնար
որ չընէ, զրացին չըզկտէ, նոր ըն-
կերակցութիւն մը կազմելու համար
քանի մը հոգի գլուխը չժողվէ եւ
պատառ մը հաց գտնալու համար
մարդասպանութիւններու չդիմէ :

Ինչու այս ամէնը, վասն զի ա-
զատ հողերու վրայ կապրինք, մեծ
մասամբ քարոյական ըսուած քանէն
տեղեկութիւն չունինք եւ կուսակ-
ցական ներքին կռիւները մեզի ե-
րես հանած՝ խելքերնիս փշածը գոր-
ծադրելու կեղանք :

Հազիւ թէ ազգին մէջ յեղափոխ-
կան ընկերակցութիւն մը ծնունդ
առած՝ սկսաւ մտածել վաղուան ճա-
կատագրին վրայ, ահա երկրորդ մը
բաժնեց անոր տարրերը եւ տարի-
ներու հողովումին հետ հետզհետէ աշ-
խարհ եկան ուրիշներ, զանազան
գոյներով, անուններով, նպատակ-
ներով ու կազմակերպութեամբ ու
ժողովուրդը ցրուեցաւ այդ խումբե-
րուն մէջ : Բայց որովհետեւ քրօթա-
կանը անուր քանը կար որ յեղափո-
խական ընկերակցութեան անհրա-
ժեշտ մէկ պէտքն էր, հարկ եղաւ որ
պայքարը սկսի եւ ամէն խումբ իր
տեսութիւնները մարտեցնել սայ դի-
մացը ելլողին, որմէ առաջ եկաւ
կռիւր, նախածանքը, նախատինքը,
անուանարկութիւնը եւ որոնք վերջ
ի վերջոյ անզգամութեան յանգե-
ցան :

Դեռ երէկ Բարիքի մէջ կազմուե-
ցաւ նոր մըն ալ «Հայկական Միու-
թիւն» անունով որուն ղեկանը կազ-
մուած է եւ ծրագրի-կանոնագիրն ալ
կը պատրաստուի : Ի՞նչ պիտի ընէ
այս Հայկական Միութիւնը, ի՞նչ
կընեն արդէն հայրենասիրական միւս
ընկերակցութիւնները որոնք ամէն
երկրի, ամէն քաղաքի եւ ամէն թաղի
մէջ կան եթէ ոչ՝ ժողովուրդին մէջ
հերձուածը աւելի սաստկացնել, թըշ-
նամութիւնները աւելի լարել եւ
կարգ մը անորակելի աղտոտութիւն-
ներու պատճառ դառնալ :

Այս ամէնուն մէջ մասնաւոր իր դերը
ունեցաւ, ունի եւ դեռ պիտի ունե-
նայ, Ո՛րքան հանդէսներու եւ թեր-
թերու թիւը զանազան ուղղութիւն-
ներով շատցաւ մեր մէջ, իւրաքան-
չիւր խումբի կիրքերն ալ ծանրա-
կշիռ համեմատութիւններ ստացան :
Անօթի մարդիկնէր մտած լրագրու-
թեան ասպարէզին մէջ մէկ թափով
մէր միութիւն կը պիտի եւ որ մը
վերջը էն գարշելի անամօթութիւն-
ները կը թափեն ասոր անոր գլխուն
եւ շրտած, չտեսնուած ու չըլլալիք
նախատինքները կընեն իրենց հետ
համամիտ չեղողներու հասցէին : Եթէ
այդ մարդիկը պատուա մը հացին հա-
մար է որ կը պատուուին, լաւ է որ
մուրան եւ հրապարակը չաղտոտեն :
Իսկ եթէ կը կարծեն թէ քաղք մը
կը գործեն եւ օգուտ մը կը մատու-
ցանեն ազգին, կը սխալին : վասն զի
կարեւորութիւն, հեղինակութիւն եւ
մաքուր անցեալ ունեցող մարդուն
խօսքն է որ կը յայտնուի խորհրդածել տալ
եւ ուղղել դայն որ կը կարծուի մե-
ղանշած ըլլալ :

Ամերիկայի, Եւրոպայի, Եգիպ-
տոսի եւ Պուրթուգալի մէջ հայկական
մասնաւոր այսօր ցոյց կուտայ գահա-
վէժ անկումի մը էն որոշիչ նշան-
ները եւ ժողովուրդը այլեւս ձանձ-
րացած՝ պժգանք կը զգայ :

Ուր որ կայ անկեղծ ազգասէր մը,
քաջուած կապրի, կը զգուշանայ իր
պարտականութիւնը կասարելէ հան-
դէպ ազգին, վարժարանին, աղքատ-
ներուն եւ որբերուն այն վախով որ
թերթ հրատարակող մէկուն ջիղերուն
դպչելով կսկսի բամբաստել, մատ-
նուիլ եւ նախատուիլ, վասն զի այդ
թերթ հրատարակողները սկզբունք
ունին ջլատել ամէն ուժ որ իրենցի-
նէն կանցնի, կործանել դայն որ ի-
րենցմէ աւելի յաջողած է, կը խօս-
ուի ժողովուրդի ամէն զասակարգե-
րուն մէջ, կը յարգուի անկից եւ կը
զնահատուի :

Ասիկա կորուստի ճամբան է, ան-
բարոյականութեան ողբալի արահետն
է ուրկից ետեւնուն քաշել կուզեն
նաեւ ժողովուրդը :

Բարիքէն կարգ մը երիտասարդներ
«Ժողովուրդին համար» խորագրով
նոր ամսաթերթ մը սկսեցին հրա-
տարակել :

Խոստումներնին շատ է, ուղղու-
թիւննին գովելի, քայքայ վաճառ, Հրա-
տարակուած առաջին թիւին մէջ Մ.
Մ. լուրջ ուսումնասիրութիւն մը կա-

նորով շատցաւ մեր մէջ, իւրաքան-
չիւր խումբի կիրքերն ալ ծանրա-
կշիռ համեմատութիւններ ստացան :
Անօթի մարդիկնէր մտած լրագրու-
թեան ասպարէզին մէջ մէկ թափով
մէր միութիւն կը պիտի եւ որ մը
վերջը էն գարշելի անամօթութիւն-
ները կը թափեն ասոր անոր գլխուն
եւ շրտած, չտեսնուած ու չըլլալիք
նախատինքները կընեն իրենց հետ
համամիտ չեղողներու հասցէին : Եթէ
այդ մարդիկը պատուա մը հացին հա-
մար է որ կը պատուուին, լաւ է որ
մուրան եւ հրապարակը չաղտոտեն :
Իսկ եթէ կը կարծեն թէ քաղք մը
կը գործեն եւ օգուտ մը կը մատու-
ցանեն ազգին, կը սխալին : վասն զի
կարեւորութիւն, հեղինակութիւն եւ
մաքուր անցեալ ունեցող մարդուն
խօսքն է որ կը յայտնուի խորհրդածել տալ
եւ ուղղել դայն որ կը կարծուի մե-
ղանշած ըլլալ :

Ամերիկայի, Եւրոպայի, Եգիպ-
տոսի եւ Պուրթուգալի մէջ հայկական
մասնաւոր այսօր ցոյց կուտայ գահա-
վէժ անկումի մը էն որոշիչ նշան-
ները եւ ժողովուրդը այլեւս ձանձ-
րացած՝ պժգանք կը զգայ :

Ուր որ կայ անկեղծ ազգասէր մը,
քաջուած կապրի, կը զգուշանայ իր
պարտականութիւնը կասարելէ հան-
դէպ ազգին, վարժարանին, աղքատ-
ներուն եւ որբերուն այն վախով որ
թերթ հրատարակող մէկուն ջիղերուն
դպչելով կսկսի բամբաստել, մատ-
նուիլ եւ նախատուիլ, վասն զի այդ
թերթ հրատարակողները սկզբունք
ունին ջլատել ամէն ուժ որ իրենցի-
նէն կանցնի, կործանել դայն որ ի-
րենցմէ աւելի յաջողած է, կը խօս-
ուի ժողովուրդի ամէն զասակարգե-
րուն մէջ, կը յարգուի անկից եւ կը
զնահատուի :

Ասիկա կորուստի ճամբան է, ան-
բարոյականութեան ողբալի արահետն
է ուրկից ետեւնուն քաշել կուզեն
նաեւ ժողովուրդը :

Բարիքէն կարգ մը երիտասարդներ
«Ժողովուրդին համար» խորագրով
նոր ամսաթերթ մը սկսեցին հրա-
տարակել :

Խոստումներնին շատ է, ուղղու-
թիւննին գովելի, քայքայ վաճառ, Հրա-
տարակուած առաջին թիւին մէջ Մ.
Մ. լուրջ ուսումնասիրութիւն մը կա-

տարած է մեր ազգին արդի վիճակին
վրայ եւ ամէն անկեղծ հայ որ կար-
գայ այդ պարզուած պատկերը ու
խորհրդածելու քիչ մը խմոր ունե-
նայ, պիտի յուզուի, իրաւունք պիտի
տայ անոր եւ պիտի ցաւի որ անեղի
տարիներու սարսափներէն յետոյ զեռ
կը շարունակենք եղբայրասպան կռիւ
փոխանակ մէկզմէկու ուժ տալու,
մասնաւոր միջոցաւ ժողովուրդին մէջ
քարոյականի սերմը ցանեցու, անոր
վստահութիւն, յոյս եւ ոգեւորու-
թիւն ներշնչելու :

Այդ պարզ, միամիտ սարքը որ ի-
համոզումներուն մէջ հաստատուելու
պէտք ունի եւ վտանգութեամբ իր
ճակատագրի խորհողներու եւ գոր-
ծողներու ձեռքը յանձնելու մարմալ
կը զգայ, այսօր վերածուած է խաւ,
ձած եւ անկերպարան կոյտի մը որ
չգիտեր ուր գլտորի, որի՞ն պիտի
իյնայ եւ ո՞վ է որ յոյսի նշոյլը
պիտի շողացնէ իր վհատած հոգիին :

Ի՞նչ կորովի նկարագիրներ ջախ-
ջախուելու դատապարտած ենք, ի՞նչ
ուժեր ջլատած ենք, ի՞նչ քաղկեդ
գոցած եւ ի՞նչ աղքատութիւններ
անօգուտ ձգած :

Մեղք է մեր ժողովուրդը, մեղք է
մեր նորահաս երիտասարդութիւնը,
որուն լրբութեան դասը կուտանք եւ
մեղք է այն տարրը որ կընայ վերա-
ծնութեան հոգովէկ օժանդակը ըլլալ
Դարեցնենք մեր կիրքերը, ընկերակ-
ցութիւններ, հանդէսներ եւ թերթ-
թերթ, անդրադառնանք այս Ե-
տարիներու մէջ գործած ոճիւրներուն
վրայ եւ գոնէ այսուհետեւ ժողովուր-
դին էական պէտքերը եւ իրական օ-
գուտը մտածենք : վերջ մը զնենք
ամէն օր նոր մարմիններ եւ ամէն
ժամ նոր հրատարակութիւններ ստեղ-
ծելու ունակութեան, եղածները պակ-
սեցնենք (՝), ձուլենք եւ զօրացնենք
որ ապագան ժպտի մեզ, ապա թէ ոչ
կորսուած ենք, ոչնչացած ենք,
գիտցէք ասիկա :

(՝) Թերթերի ծնունդը վնաս չունի,
եթէ լաւ եւ առողջ ուղղութեամբ
հրատարակութիւնները շատանան,
վատերը իրանք իրանց կը ոչնչա-
նան :

Մ. Մ.

միայն դեմօկրատական հոգի վրա :
Անդրկովկասեան ազգերի աշխատա-
ւոր դասերի մէջ գոյութիւն չունեն
ներհակութիւններ, որովհետեւ այդ
գասերի շահերը միանգամայն համե-
քաշել են եւ այն ինչ որ հայ վրա-
ցիական կամ հայ-թիւրքական ան-
տագօնիկ մը կը լուծուի, ոչ այլ ինչ է
եթէ ոչ հայ գրամատիքութեան եւ
վրաց ու թիւրք աւատականութեան
միջուկ դարերից ի վեր գոյութիւն
ունեցող զասակարգային հակամար-
տութիւնը :

Անդրկովկասի անկախութիւնը եւ
պետական կազմի ուսմակարացումը
ձեռք պիտի բերել տեղական ազգերի
աշխատաւոր դասերի համերաշխ,
կազմակերպ եւ զիտակից գործու-
նելութեամբ :

Մշակական կոչուող հաստարազ ա-
զատամիտները կառարկեն մեզ ան-
շուշտ, թէ կարծիք չըկայ Անդրկով-
կասի անկախութեան ձգտելու, որով-
հետեւ վաղ թէ ուշ ամբողջ Ռուսաս-
տանի վրա կը ծագի սփռմանագրու-
թեան երջանակներ արեւը եւ մենք,
անդրկովկասեան ազգերս, ուրիշ ու-

Չինաստանի մէջ եւրոպական պետութիւնները գեռ չը վերջացրին իրենց գործերը. Չինական արքունիքը գեռ Պէկին չէ վերադարձել, պատերազմական տուգանքի խնդիրը գեռ չէ վերջացած, Մանչուրիայի մէջ կազմութիւնը հետզհետէ աւելի վտանգավում է. Չինական ապստամբները երկրի զանազան անկիւններում կրկին գլուխ են բարձրացնում եւրոպացիներին դէմքին այս բոլոր խառնիխառն խնդիրները ե՞րբ պէտք է լուծվեն, ե՞րբ Չինաստանում պէտք է խաղաղութիւնը վերահաստատվի, այդ միայն ալլահը գիտէ...

Անգլիան գեռ չը վերջացրեց Տրանսպալի պատերազմը. Բոէրները գերի են բռնվում, սպանվում են, իրենց պատերազմական պաշարները կորցնում են, բայց գեռ չարունակում են պատերազմել. Կարծես այս պատերազմն էլ վերջ չունի, թէեւ պատերազմի կերպարանքը չը կայայելուս, բոէրները համոզված են թէ անկարող են անգլիացիներին յաղթել, յակայն, ինչպէս երեւում է, որոշել են իրենց քաղաքական մահով դժուար բուժելի վէրք տալ Անգլիային:

Ու անգլիան զբաղված է Տրանսպալով. իր հարստութիւնը իր զինուորական ամենալաւ ուժերը թափում է Տրանսպալ, փոքրիկ ժողովրդին խեղդելու իր կատաղութեան ծարաւը յագեցնելու համար:

սական ազգերի հետ կը կարողանանք ազատ եւ ինքնուրոյն կերպով զարգանալ, հենւելով այն իրաւունքների եւ ազատութեան վրա, որ կուտայ մեզ ընդհանուր ուսական սահմանադրութիւնը:

Թող ներքին ինձ մեր պատկառելի լիբերալները, բայց ես այլեւս չեմ հաւատում սահմանադրութեան այդ ցնորքներին:

Սահմանադրական Գերմանիայում դոցում են լին ժողովրդական զբաղումները, արդիւում են լին թերթերը, լուծում են լին քաղաքական եւ զուտ քաղաքական կազմակերպութիւնները եւ ամենից կոչվում ու ու գոհելի միջոցներով աշխատում են պրոսպանել լին ժողովուրդը. սահմանադրական եւ ազատամիտ Անգլիայում ալլաղի ժողովուրդներին բռնի ունդարացումը յաղթութեան սօներ է սօնում. սահմանադրական եւ հանրապետական Պրանսիայում մի քանի տարի առաջ արգիլեցին միակ իտալական թերթը, չը նայած այն բանին, որ երկրի հարաւարեւելեան անկիւնը համարեայ

Ռուսաստանը զբաղված է Մանչուրիայով, և ներքին խնդիրներով:

Այս տարի յաջող տարի չէր Ռուսաստանի համար. ոչ ներքին և ոչ արտաքին քաղաքականութեան տեսակէտով. Երկրի ներսում տեղի ունեցած խռովութիւնները, որոնք ներքին յեղափոխութեան կերպարանքը ընդունեցին, մի առ ժամանակ շարեցրին ցարի կառավարութիւնը: Այդ խռովութիւնները զսպկեցին, բայց վախը մեծ յեղափոխութեան սարսափը մտապաշտօնական Ռուսաստանի հոգու խորքերը: Չինացիք և ճապոնցիներն էլ մի կողմից անհանգստացրին հսկայ Ռուսաստանին, Այսօր Ռուսաստանի թէ ներքին և թէ արտաքին կացութիւնը վտանգված է. ներսում ժողովրդական յեղափոխութիւնն է սպառնում, իսկ դրսից օտար մրցակիցները:

Չինաստանը, ճապոնիան և ներքին խռովութիւնները կապել են Ռուսաստանի ձեռքերը, ինչպէս և Անգլիան չապված է:

Այս վիճակից օգտվում է Թուրքիան. նա ժամանակ է գտել լուռ ու մունջ խեղդելու, շնչելու դժգոհ հայ տարրը. և բացարձակ հալածանք է սկսել Մակեդոնիայի մէջ, Բալքանեան երկիրների փոքրիկ պետութիւններին անհամաձայնութիւններից օգտվելով Սուլթանը՝ ազատ, համարձակ միջոցներ է ձեռք առնում Բալքանի վրա իր իշխանութիւնը ամրացնելու հրով, սրով, քաղաքական ինտրիգներով: Աւստրիա և Գերմանիա աչքի տակով են նայում Սուլթանի այդ արարքների վրա, իսկ Անգլիա

թէ ամբողջովին իտալական է եւ առհասարակ տեսնում ենք, որ այն ինչ որ միապետութիւնների մէջ կառավարութիւններն են կատարում փոքրիկ ազգութիւնների վերաբերմամբ, սահմանադրական երկիրների մէջ կատարում են թուով վերջնազգեղի ներկայացուցիչները:

Ուրեմն Ռուսաստանի ընդհանուր սահմանադրութիւնը չէ այն քաղաքական իրէպար, որը կարող է ոգեւորել մեզ: Մենք պիտի ձգտենք մի այնպիսի ձեւի որ վերջնապէս կազատի Անդրկովկասի ժողովուրդները ցեղային հալածանքներից, որ հնարաւորութիւն ցոյց կուտայ այդ ժողովուրդներին ազատ ինքնուրոյն կերպով զարգանալու եւ կուսնեայ ժողովրդի կարիքներին ծառայող և մի միայն այդ բարիքներին համար ստեղծուած հիմնարկութիւններ, եւ այդ ձեւը անկախ Անդրկովկասի ֆեդերալիստական դեմօկրատին է, տեղական ազգութիւնների զանակցական օսմկավարութիւնը:

և Ռուսաստան, աւելի ծանր խնդիրներով զբաղված, ճիգեր են թափում միայն Սուլթանի հետ բարեկամական յարաբերութիւններ պահպանել, որպէս զի Սուլթանը բոլորովին Գերմանիայի գիրկը չընկնի: Սուլթանը վեհափառօրէն պատասխանում է այդ մեծ գեաւորների կեղծ բարեկամական ժպիտներին և իր քրիստոնեայալինջ քաղաքականութիւնը առաջ է տանում, քանի պարագաները թող են տալիս:

Իտալիա, Պրանսիա, Իսպանիա և Փորթուգալիա զբաղված են աւելի իրենց ներքին խնդիրներով. արտաքին քաղաքականութեան մէջ շատ քիչ գեր են խաղում: Այդ տեղերում բուրժուազիտի և կղերականութեան դէմ մղված կռիւներն են զբաղեցնում հասարակութեան մըտքերը: Բանուրները գործադուներ են անում, հասարակութիւնները ժողովներով բողոքում են իգերականութեան դէմ և հալածում սեւազգեստներին, նոր օրէնքներ սահմանելով:

Ամերիկան Ֆիլիպպինցիներով և Կուբայով է զբաղված. Իսպանական լուծից ազատելով այդ ժողովուրդներին՝ անպատճառ իր հովանիի տակ է ուզում պահել, անկոչ և առելի ծծօր գեր կատարել ուղելով:

Վերջապէս աչխարհը ամբողջովին լարված է, ցեղերը մէկմէկ կուլ տալ են ուզում, դասակարգերը մէկմէկ խորտակել. և քսաներորդ դարը գուցէ այդ գործողութեան վերջ գնող դարը լինի:

Վերջին խօսքս պատկանում է նորից տաճկանայ դատին եւ վերջին դիմումս իմ թրքահայ եւ զաչնակցական ընկերներին:

Ընկերներ, ես երկարօրէն ծանրացայ ուստահայ խնդրի վրա ոչ թէ այն պատճառով, որ այս արդի պատմական վայրկեանին աւելի կարեւոր է, այլ անոր համար, որ այն աւելի նոր է ու անորոշ քան թիւրքահայ խնդիրը:

Դեռ մի տարի առաջ ես ստիպում էի ինձ կարծել, թէ այդ երկու խնդիրները հաւասար կարեւորութիւն ունին հայութեան համար եւ սրտիս քար սեղմելով ասում էի, որ մենք չը պիտի խառնենք տաճկահայերի գործին, թողնելով որ նրանք առաջ տանեն իրենց դատը, իսկ մենք մերը: Բայց դատողութիւնների ծանր քրի տակ դժուար էր խեղդել արիւնի, խղճի ամօթի ձայնը եւ հիմա գալիս եմ բացարձակօրէն յայտարարելու, որ տաճկահայ խնդիրը ինձ համար, անհատապէս միակ մեծ, միակ կարեւոր խնդիրն է, ես կուզէի, որ թուրքահայ խնդիրը մեր, մեր ուս-

Մեր ընթերցողները անշուշտ կը յիշեն որ Սուլթանը կարծեցեալ դաւադրութեան մը համար պատուիրած էր սէլամըքը այցելող օտարականներու համար շինուած քէօշկը քակել: Այդ խենթութեանէն վերջը այցելու օտարականները կը բարձրանային տերասայի վրան: Անցեալ օրերը Գերմանական դեսպանի զաւակները և քանի մը զբօսաշրջիկներ դեսպանին ստորագրութիւնը կրող արտօնաթուղթով մը կերթան սէլամըքի. սակայն անոնց կազգիւրի տերասայի վրայ ելլալ: Գերմանական դեսպանը երբ կուգայ դեսպանական մարմնոյն յատկացուած քէօշկը և իրեն հասցուցած անպատուութիւնը կիմանայ, բարկութեանէն գոյնը կը նետէ, կիջնայ վար և իր ձեռքով բանալով տերասայի վանդակապատ դուռը, զոր կը պահպանէ եղեր Սուլթանի թէկնապահ չէրքէզ Մէհմէտ փաշան, իր զաւակները և զբօսաշրջիկները ներս կը մտցնէ, Մէհմէտ փաշային ըսելով որ՝ ինք կը յուսար թէ իր ստորագրութիւնը յարգուած պիտի ըլլայ:

Անշուշտ այս փառաւոր ապտակ մըն է Սուլթանին հոմար. տեսնենք Սուլթանի եղբայր Վիլհէլմ կայսրը զո՞վ պիտի յանդիմանէ, իր դեսպանը թէ իր մահմետական թագակիր եղբայրը: Չըլլայ թէ Մարշալին Պերլին վերադառնալուն պատճառը աս ըլլայ:

սահայ ինտրիգէնտների քունը խանգարող, հանդիստը վրդովող խղճի խայթը լինել, որ այդ խնդիրը մեր պատի խնդիրը լինել: Թող մեզանից ամեն մէկը ասի ինքն իրեն. «մի կողմը նետեմ իմ խղճուկ խոհեմութիւնս ու խոհականութիւնս եւ գնամ սեփական մատերովս շոշափելու ու աչքերովս տեսնելու տաճկահայ ժողովուրդի խոր վէրքերը, եւ եթէ իմ մէջ բաւականաչափ քաղաքացիական արիւթիւն կը զգամ, կատարեմ այն «մեծ խենթութիւնը» որը իր մէջ ամենից մեծ իմաստութիւնն է բովանդակում, այն՝ որ տաճկահայ ժողովուրդը պիտի ապրի ինչ էլ որ լինի»:

Աւարտեցի խոհերս, տեսչերս...
Վ. ԱՍԼԱՆԻՆ ()

() Այս յօդուածի առաջին մասի տակ, սխալմամբ «Ուսանող» ստորագրութիւն արուեր է փոխանակ վ. Ալլանեանի:

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Մարաշի ազգային որբանոցի վիճակացոյցը զրկուած է պատ-
րիարքարանի . հոն կրպատուար-
ուին 102 որբեր և 8 մնայուն
պաշտօնեաներ :

Որբանոցը կը պահուի ժահ-
մարեան եղբայրներու հաշուով :

— Բարիքի մէջ սկսեր է հրա-
տարակուրի նոր ամսագիր մը
«Ժողովուրդին համար» անունով :
Առաջին թիւը ստացանք . արտա-
սահմանի մէջ վերջերս հրատա-
րակուած բոլոր ամսագիրներէն
աւելի լաւ տպագրութիւն կը թու-
զու : Յանկալի է որ այս հանդէսը
իր առաջին թիւին ուղղութեամբ
ընթանայ :

Հանդէսի խմբագրութիւնը բո-
լոր հայ անկեղծ ուժերը առանց
ուէ է խորութեան : Կը հրաւիրէ
աշակցիլ իրենց սկսած գործին :

Կը փափագինք որ «Ժողովուր-
դին համար» իր արտասարգ խմ-
բագիրները լրջութեամբ ուսում-
նասիրեն ժողովուրդին կեանքը և
ըստ այնմ անոր ցաւերուն դե-
ղագիրներ գրեն :

Եւ ո՛հ այն ատեն իրենց
գրածները ստուգապէս ժողովուր-
դին համար պիտի եղած ըլլան :

Հանդէսի բաժնեգրինն է տա-
րեկան 10 ֆրանք :

Հասցէ՝ A. FORTIN
10 Rue Dupont des Loges
VII Paris

— Լ'Արմէնի կը հաղորդէ թէ
Բարիքի հայերէն 30 հոգիի մը
չափ քաֆէ Ռիչի մէջ հաւաքում
մը ունենալով ընկերութիւն մը
հիմներ են , «Հայկական Միու-
թիւն» անունով :

Ընկերութիւնը ապրիլ 3ին առ-
ժամեայ վարչութիւն մը ընտրած
է 9 անդամներէ բաղկացած :
Ընտրուողները են Միքայէլ Թա-
մազէֆ , բրօքէսէօր Վամբարով ,
Մ. Փրիտոնով , Իսկէնտէր , Մի-
նաս Չերազ , Արշակ Չօպանեան
Ե. Թընկը , Տիգրան խան Գէլէկ-
եան , Գ. Փէյլիվանեան :

Ընկերութեան խորհուրդը ապ-
րիլ 10 հաւաքուելով Իսկէնտէրը
նախագահ ընտրեր է , Թամաժ-
չէվը փոխ նախագահ , Փրիտոնով
գանձապետ , Ա. Չօպանեան քար-
տուղար , Իսկ Պասմաճեան գրա-
դարանապետ :

Այս տեղեկութեանն որոշապէս
չի հասկցուիր թէ ընկերութիւնը
ինչ նպատակ ունի :

Անշուշտ ընկերութեան վար-
չութիւնը պիտի յայտարարէ ըն-
կերութեան նպատակը :

— «Դժոջակո» 2 թիւին նուի-
րատուութեանց բաժնին մէջ ար-
ձանագրուած է նաեւ վերջերս
Պուլկարիոյ երեք քաղաքներու
մէջ դաշնակցականներու կողմէ
եղած հանգանակութեան ար-
դիւնքը . սրու ընդհանուր գու-

մարը կը հասնի 2975 արծաթ
լէվի և 810 ոսկի ֆրանքի . մի-
այն Վառնայ մէկ շաբաթուան
մէջ գանձուած է 810 ոսկի ֆր-
և 190 արծաթ լէվ : Հաստատ
աղբիւրներէ կիմանանք որ Վառ-
նայի մէջ հանգանակութիւնը
դեռ չէ դադարած :

Պուլկարայ գաղութի դէպի
Հ. Յ. Դաշնակցութիւնը ունեցած
համակրութեան այս դրական
փաստը ամենէն զգալի ապտակն
է այն արարածներուն որոնք
դեռ կը յաւակնին կարծել թէ
իրենց վայրահալութիւններով
կրնան ժողովուրդի վրայ ազդել և
զայն Դաշնակցութեան պաղե-
ցնել :

Ձր պէտք է մոռնալ և այն պա-
րագան որ այս հանգանակու-
թիւնը տեղի կունենայ դրամա-
կան ամենասոսկալի տագնապի
միջոցին :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Պուլէն Թանի կը գրեն .
Եմէնի մէջ կացութիւնը կար-
ծուածէն աւելի տագնապալի է ,
աշխատուի խալիֆայութիւնը
Սուլթանէն խելի , յանձնել մար-
գարէի սերնդէն մէկուն և արա-
բական կայսրութիւնը հաստա-
տել . Արտաբական այս յուզումը
այն առանձնացած յուզումներէն
չէ որ կարելի ըլլայ շտապով
զրկուած զօրագունքով մը ճնշել :
Այս յուզումը կը ղեկավարուի
զօրեղ և գաղտնի Մահմետական
ընկերութեան մը կողմէն , որուն
կեդրոնները են Գահիրէ , Դա-
մասկոս և Մէքիէ : Այս ընկերու-
թիւնը կը կոչուի «Ճէմիէթ Իւս
Իսլամիէթ» (Իսլամական ընկե-
րութիւն) :

Եւ իրեն նպատակն է ինչպէս
ըսինք խալիֆայութիւնը Սուլ-
թանէն խելի : Ճնմարիտ է Կիւ-
րաւ գործադրուելիք նպատակ
մը չէ , բայց կը թուի թէ այս
ընկերութիւնը կարող պիտի ըլ-
լայ յաջողցնել : Վերջին ուխտա-
գնացութեան միջոցին ընկերու-
թիւնը իր անդամներէն , որոնք
արաբական նշանաւոր ընտանիք-
ներու կը պատկանին , խումբ մը
Մէքիէ զրկած է իրեն վարդա-
պետութիւնը հոն քարոզելու հա-
մար :

— Չինաստանի մէջ մահմէտա-
կանութիւն քարոզելու պատուի-
րակութիւնը Չար շոգենաւով Չի-
նաստան մեկնել է :

— Պուլսոյ մէջ ժանտախտի
դէպք մը պատահեր է . հիւան-
դացողը մաքարոնիայի գործա-
րանի մէջ աշխատող յոյն մըն է :

— Ռուսիոյ խռովութիւնները
Սուլթանի պալատի մէջ մեծ յու-
զում առաջ բերեր են :

Այսուհետեւ միայն Իտալացի-
ները չեն վտանգաւոր անիշխա-
նականները :

Օտէսայէն Պուլսոյ եկող շոգե-
նաւները սովորականէն աւելի
խստութեամբ կը հսկուին , ան-
ցագիրները մանրազնին կեր-
պով կը քննուին և փոքրիկ կաս-
կածի մը պատճառով ճամբորդ-
ները իրենց Էտ կը դարձունին :
Նաեւ ծառայողները ցամաք կըր-
նան ելլալ միայն նաւապետի
ստորագրութեամբ թուղթ մը
ներկայացնելով : Ամէն շոգենա-
ւի շուրջը գիշերները երկու ոս-
տիկանական նաւակներ կը դե-
գերին նաւերը հսկելու համար :

— Պուլսոյ գերմանական դես-
պան Պ. Մարշալ խնդրած է իր
կառավարութեանն որ ետ կան-
չուի և կոչուի նախարարա-
կան պաշտօնի մը , թէեւ այս
միջոցին Գերմանիոյ մէջ նախա-
րարի դիրքը շատ ապահով չէ :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Ապրիլեան ապստամբութեան
25 ամեակի առթիւ ազգային
ժողովի նախագահ Պ. Կէչովի ա-
ռաջարկութեամբ ազգային ժո-
ղովը նիստը դադարեցուցեր է և
յանձնարարեր է հեռագրով դի-
մել Բանակիւրիշթէի Կոմիթէին
և շնորհաւորել Պուլկարիոյ ազա-
տութեան զինուորները :

— Ֆէրտինանտ իշխանը ապ-
րիլ 20ին առաւտուն կանուխ
հասեր է Բանակիւրիշթէ ապս-
տամբութեան յորեխանի հան-
դէսին ներկայ գտնուելու համար
ժողովուրդը մեծ ոգեւորութեամբ
և ուրախութիւնով իշխանը ըն-
դունել է : Նախարարապետ Գա-
րալէյով իշխանին հետ է եղեր :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Անգլիոյ պատերազմական նա-
խարարը Կիլիսիոյ մէջ ճառ
մը խօսելով յայտարարեր է թէ
անհրաժեշտ է կարելի եղածին
չափ շուտով աւարտել պատե-
րազմը :

— Լօրտ Բիշնէր կը հեռագրէ
թէ Անգլիական թեթեւաշարժ
հեծելազօրքերը բուռն ճակատա-
մարտէ մը ետք , գերի բռնել
են ութսուն պօէրներ , որոնցմէ
երկուքը սպաններ են : Ճակա-
տամարտը տեղի ունեցեր է Տէ-
վէթատորբի մօտ :

— Պրիւքսէլէն Լոնտոնի թեր-
թերուն կը հեռագրեն որ նախա-
գահ Բրիւկէրը շրջապատողները
կը յայտնեն թէ Քարի ապստամ-
բութիւնը վերջերս մեծ ծաւալ
ստացեր է : 7000 ապստամբներէ
աւելի պօէրներու հետ պիտի
միանան :

— Բրէթօրիայէն կը հաղորդեն
որ Անգլիական զինուորական ատ-
եանը դատապարտեր է Հոլան-
տացի թղթակից մը որ գրաքնն-
նիչէն խուսափելով Անգլիական

զօրախումբերը զրպարտեր է :
Թղթակիցը իր թերթին գրած
նամակներուն մէջ ըսեր է որ
անգլիացի զինուորները պօէր
կինները նախատեր են : Լրատուն
պատիժը որոկած չէ , բայց կըսէ
որ Բիշնէրի վաւերացման պիտի
ներկայացուի :

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Բէքիւնէն Փուսք Փուրթեր
Չայթունկի կը հեռագրեն թէ
ուսերը Մուքտէնի մօտ բուռն
ճակատամարտ մը ունեցեր են
Չինացիներուն հետ , Սերբիցքի
զօրավարն ալ վիրաւորուած է :

— Վալտէրգէ կը հեռագրէ որ
Իե.ր առաջարկած է Թիէնէի
մէջ վեց հազար գերման զին-
ւորներ պահել մինչեւ որ բեր-
դերը քանդուին :

— Չինաստանէն եկած լուրե-
րու համաձայն՝ Գերմանիա կաշ-
խատի արտօնութիւն մը ձեռք
բերել Բանթօնի մէջ :

— Ապրիլ 18ին Բէքիւնի մէջ
եւրոպացի զօրավարները խոր-
հրդակցութիւն մը ընելով որո-
շեր են դեսպաններուն յայտա-
րարել որ միջազգային զօրքերը
չը հեռանան , մինչեւ Չինաս-
տանի տուգանքի քանակութիւնը
որոշուի և ան յայտարարէ որ
պատրաստ է վճարել : Նոյն նիս-
տին մէջ որոշուեր է նաեւ որ Չի-
նացիները կամաց կամաց սկսին
Բէքիւնի կառավարութիւնը իրենց
ձեռքը առնել , և եւրոպացի
զինուորները միայն վերին հըս-
կողութիւնը կատարեն :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Չարը Փրանսայի արտաքին
գործոց նախարար Պ. Տէլքասէի
հետ տեսնուած միջոցին խոր-
հրդակցած է նաեւ Արեւելեան
խնդրոյ մասին . և կըսուի թէ հա-
մաձայնութիւն մը գոյացած է ե-
թէ Մակեդոնական և Հայկական
խնդիրը սուր հանգամանք ստա-
նան :

Կ Ր Է Տ Է

Կրէտէի վերջին ընտրութիւն-
ներուն մէջ յոյները մեծամաս-
նութիւն շահեր են և յունական
ոգին կսկսի հետզհետէ տարած-
ուիլ օտար տարրերու մէջ ան-
գամ :

Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Յուլիանէս Տէր Խաչերեան ,
Սեբաստիոյ Կոլտին գիւղէն , 40
տարեկան միջահասակ , ամուս-
նացած , 96ի դէպքերէն ի վեր
անյայտ :

Տեղեկութիւն ունցողները թող
հաճին հաղորդել Ֆիլիպէ՝
Պ. Վարդանեանի սրճարանը :

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Х.ЖРДИЧЪ ВАРГАНЪ

Печ. «Взаимность» — Варна.